



«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՑՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔՎԱԶ-ԹԵՅԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԳ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Բնթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակիր համայնքների վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզի Լիճվազ-թեյի ոսկու հանքավայրի ստորգետնյա եղանակով շահագործման 22.11.2012թ. N ՊՎ 293 ընդերքօգտագործման պայմանագիրը կնքվել է «Սազամար» ՍՊԸ-ի հետ, որից հետո, ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման հիմքով այն 16.02.2015թ. վերակնքվել է «Էլվի մայնինգ կամպանի» ՓԲԸ-ի հետ, այնուհետև նույն հիմքով 24.11.2016 թվականին՝ «Լիճվազ» ՓԲԸ-ի հետ: 2015 թվականին «Լիճվազ» ՓԲԸ-ի բաժնետոմսերը ձեռք է բերել «Polymetal Group» ընկերությունը:

2015 թվականի դեկտեմբերի 8-ին ընդերքօգտագործման պայմանագրում կատարվել են հաստատված հանքավայրի կոորդինատների փոփոխություններ: Ըստ պայմանագրի՝ հանքի շինարարական աշխատանքները պետք է ավարտվեն 2013 թվականի վերջին, իսկ հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցումը՝ մինչև 2015 թվականը: Անհրաժեշտ է նշել, որ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման հեռանկարը հակասում է «Լիճվազ-թեյի ոսկու հանքավայրի շահագործման» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» փորձաքննական 29.06.2017թ. ԲՓ 60 եզրակացության փորձաքննական 2-րդ պահանջին, համաձայն որի՝ տվյալ տարածքում բացառվում է հանքաքարի վերամշակման (ֆաբրիկա, պոչամբար և այլն) և կուտակման աշխատանքների իրականացումը:

Ընկերությունում զբաղված աշխատակիցների թիվը 2016 թվականին կազմել է 8, որոնցից 2-ը՝ օտարերկրյա քաղաքացի, 2017 թվականին՝ 24 հոգի, որոնցից 1-ը՝ օտարերկրյա քաղաքացի, 2018 թվականին՝ 43 հոգի, որից 26-ը Կապանից, 1-ը՝ Վարդենիսից, 6-ը՝ Երևանից և 10-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից:

Ընկերությունը 2018 թվականին արդյունահանել և «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ում իրացրել է ոսկի, արծաթ և պղինձ պարունակող 40031տ հանքաքար՝ 881108705 դրամ իրացման արժեքով:



Նկար 1. Լիճվազ-թեյի ոսկու հանքավայրի տարածք

«Լիճվազ» ՓԲԸ-ի ընդերքի շահագործման թույլտվությունն է ՇԱԹՎ-29/293 22.11.12թ., թույլտվության ժամկետը՝ 22.11.2012 թվականից մինչև 08.02.2036 թվական: Հանքավայրի հանքաքարի և օգտակար բաղադրիչների հաշվեկշռային պաշարը 2995,856 հազար տոննա է՝ ըստ $C_1 + C_2$ կարգի, ոսկին՝ 17650,85 կգ (5,9գ/տոննա պարունակությամբ), արծաթը՝ 105,24տ (32.29 գ/տ պարունակությամբ), պղինձը՝ 13.421 հազար տ (0.40% պարունակությամբ): Տարեկան թույլատրվող արդյունահանման

ծավալը՝ 100-300,0 հազար տոննա՝ ըստ ժամանակացույցի: Հանքավայրի զբաղեցրած տարածքը 57,4 հա է:

Ազդակիր Մեղրի համայնքի, Վարդանիձոր և Լեհվազ բնակավայրերի մասին

Գ. Վարդանիձոր



Նկար 2. Գյուղ Վարդանիձոր

Լիճվազ-թեյի ոսկու հանքավայրի ազդակիր բնակավայրն է Մեղրի խոշորացված համայնքի Վարդանիձոր բնակավայրը, որի մեջ ներառված են Թխկուտ և Այգեձոր գյուղերը: Այս գյուղն ազդակիր է նաև Մեղրասարի ոսկու հանքավայրին, որի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ատ-Մետալս» ՍՊԸ-ին: Այն ազդակիր է նաև Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրին, որի կենտրոնական տեղամասի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ղարագուլյաններ» ՓԲԸ-ին և Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասին, որի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ին:

Ըստ Մեղրի խոշորացված համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի՝ որպես Վարդանիձոր բնակավայրի բնակչության ընդհանուր թիվ նշված է 347, որից 167 տղամարդ և 180 կին: Սյունիքի մարզպետարանի կայքում Մեղրի խոշորացված համայնքի բնակիչների թվում նշված է, որ Վարդանիձորի բնակիչների թիվը 152 է, Այգեձորի բնակիչների թիվը՝ 2, իսկ Թխկուտինը՝ 67: Ըստ Լեհվազի և Վարդանիձոր բնակավայրերի ներկայացուցչի՝ 2020թ-ի վերջի տվյալներով Վարդանիձորի բնակչության թիվը 255 է, որից 99-ը տղամարդ, 156-ը կին: Այգեձորում կա 1 տնտեսություն, իսկ Թխկուտում 8: Գործում է «Վարդանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը՝ 44 աշակերտով: Գործում է 1 մանկապարտեզ, որն ունի 12 սան:

Վարդանիձոր բնակավայրի հողերի մակերեսը կազմում է ընդամենը 9312 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5176 հա, որից՝ վարելահող՝ 125 հա, բազմամյա տնկարկ՝ 4 հա, խոտհարք՝ 12 հա, արոտ՝ 1468 հա, այլ հողատեսք՝ 3567 հա, բնակավայրերի հողեր՝ 54 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 20 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 16 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4002 հա, անտառային հողեր՝ 36 հա, որից անտառածածկ՝ 1 հա, ջրային հողեր՝ 7 հա:

Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ, մեղվաբուծությամբ:

Գ.Լեհվազ

Ըստ Մեղրի խոշորացված համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի՝ որպես Լեհվազ բնակավայրի բնակչության ընդհանուր թիվ նշված է 646: Ըստ Լեհվազի և Վարդանիձոր բնակավայրերի ներկայացուցչի՝ 2020թ-ի վերջի տվյալներով Լեհվազի բնակչության թիվը կազմել է 615, որից 304-ը՝ տղամարդ, 311-ը՝ կին:

Գործում է «Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի Լեհվազի մասնաճյուղը:

Ունի 89 աշակերտով դպրոց:

Զբաղեցրած տարածքը՝ 1007,77 հա:



Նկար 3. Գյուղ Լեհվազ

Հողեր (ընդամենը)՝ 3385 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1336 հա, որից՝ վարելահող՝ 77 հա, բազմամյա տնկարկ՝ 39 հա, խոտհարք՝ 12 հա, արոտ՝ 332 հա, այլ հողատեսք՝ 876 հա, որից բնակավայրերի հողեր՝ 57 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 4 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 17 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1934 հա, անտառային հողեր՝ 22 հա, որից անտառածածկ՝ 22 հա, ջրային հողեր՝ 14 հա:

Բնակավայրի բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ, մեղվաբուծությամբ:

Վարդանիձոր և Լեհվազ բնակավայրերի խնդիրներն են՝ աղքատությունը, կախվածությունը արդյունաբերության հանքարդյունաբերության ճյուղից, բնակչության արտագաղթը, օդի և ջրի, հողի աղտոտվածությունը, ժամանակակից ենթակառուցվածքների բացակայությունը, անբարեկարգ ճանապարհները և միջբնակավայրային տրանսպորտի բացակայությունը, տարածաշրջանում վտանգավոր արդյունաբերական ձեռնարկությունների և պոչամբարների առկայությունը:

Մասնավորապես՝ ԷկոԼուրի հետ հանդիպման ժամանակ Վարդանիձորի կազմում ընդգրկված Այգեձոր գյուղում բնակիչը բողոքեց, որ Լիճվազ-թեյի ոսկու հանքավայրից արդյունահանված հանքաքարը տեղափոխող բեռնատարներն, անցնելով Այգեձորի միջով, փոշի են բարձրացնում և խոչընդոտում տեղի հանգստյան գոտու գործունեությանը:

Մեղրի քաղաքային համայնք

Մեղրի քաղաքի բնակչության ընդհանուր թիվը 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 3380 մարդ (իգական՝ 2095, արական՝ 1285), նպաստառուների ընդհանուր թիվը՝ 135, որից ընտանեկան նպաստառուների թիվը՝ 77, գրանցված գործազուրկների թիվը՝ 142:

Ունի 2 միջնակարգ դպրոց նախատեսված 1351 տեղի համար, ներկայումս այնտեղ հաճախում է 536 աշակերտ:

Գործում է «Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կենտրոնական մասնաճյուղը, որտեղ հաճախում է 250 սան: Գործում է «Մեղրիի արվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ-ը, որտեղ փաստացի հաճախում է 107 աշակերտ:

Մեղրիում գործում է մեկ միջնակարգ մասնագիտական ԲՈԻՀ՝ Մեղրու պետական քոլեջը, որն ունի 177 ուսանող: Շենքը նախատեսված է 200 ուսանողի համար:



Նկար 4. Մեղրի քաղաք

Առողջապահական միակ հիմնարկը՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն է, ստեղծվել է 2010 թվականին «Ագարակի հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Մեղրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միավորման արդյունքում: Կենտրոնը մատուցում է հիվանդանոցային, արտահիվանդանոցային և շտապօգնության ծառայություններ:

Քաղաքում գործում են «Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ն, որն արտադրում է մուրաբա, ջեմ, օշարակ, բնական հյութ, կոմպոտ և «Մեղրու գինու գործարան» ԲԲԸ-ն, որն արտադրում է խաղողի և նռան գինի:

Մեղրի համայնքի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են պտղաբուծությունը և մեղվաբուծությունը:

Առավելապես տարածված է մերձարևադարձային պտուղների՝ նռան, թզի, արքայանարնջի, իսկ վերջին տարիներին նաև կիվիի և ձիթապտղի մշակությունը:

Համայնքում մասամբ զբաղվում են նաև անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ:

Համայնքն ունի առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ հիմնախնդիրները՝
1. Չնայած համայնքի տարածքում հանքարդյունաբերության զարգացման մեծ ծավալներին և տնտեսական շահութաբերությանը, դրա զարգացումը կարող է հանգեցնել էկոլոգիական լուրջ խնդիրների՝ հողային ծածկույթի խախտման,

պոչամբարների ընդլայնման, թափոնների կուտակումների և ջրային ռեսուրսների աղտոտման:

2. Համայնքում բացակայում է գյուղատնտեսական շուկան, և դրա բացակայությունը բացասաբար է անդրադառնում պտղաբուծությամբ զբաղվողների արտադրանքի սպառման վրա:

3. Չկան համայնքի բնակավայրերը կենտրոնին և միմյանց կապող միկրոավտոբուսային երթուղիներ, և այս հանգամանքը սոցիալ-տնտեսական լուրջ դժվարություններ է առաջացնում բնակիչների շրջանում: Մեղրի քաղաքի շատ բնակիչներ ունեն սեփականության կամ վարձակալության իրավունք գյուղերի մեծաքանակ հողամասերի նկատմամբ: Սակայն տրանսպորտային երթուղիների բացակայությունը և տեղաշարժման դժվարությունները հնարավորություն չեն տալիս դրանց օգտագործումը:

4. Վարդանիձոր, Ալվանք, Շվանիձոր, Նոնաձոր, Լիճք գյուղերում չեն գործում նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

5. Համայնքում մարզադահլիճի բացակայությունը խոչընդոտում է մարզական կյանքի լիարժեք զարգացմանը:

6. Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհները մեծ մասամբ գտնվում են անբարեկարգ վիճակում:

«Լիճքվազ» ՓԲԸ-ի իրական սեփականատերերի մասին

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայքի՝ «Լիճքվազ» ՓԲԸ-ն գրանցվել է 2010 թ-ի նոյեմբերի 12-ին: Ընկերության միանձնյա իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Սասուն Ավետիսյանն է՝ 100% բաժնեմասով, որը նա ձեռք է բերել 2019 թ-ի դեկտեմբերի 23-ին: Նա նաև Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է:

Բացի «Լիճքվազ» ՓԲԸ-ից, Սասուն Ավետիսյանն աշխատում է նաև Հայաստանում գտնվող «Ապառաժ Մայնինգ», «ԷյՋիԱրՄի», «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ներում: «Ապառաժ Մայնինգ»-ում, որը զբաղվում է արդյունաբերական պայթուցիկ նյութերի արտադրությամբ, Սասուն Ավետիսյանը գլխավոր տնօրեն է: Ավետիսյանի համար «Լիճքվազ» ՓԲԸ-ում որպես միջանկյալ ընկերություն գործում է «Էյ Ջի Ար Մի» ՍՊԸ-ն¹:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության մասին

«Լիճքվազ-թեյի ոսկու հանքավայրի շահագործման» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» փորձաքննական 29.06.2017թ. ԲՓ 60 եզրակացության փորձաքննական պահանջներն են՝

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ, այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվությունը:

¹ և <https://www.e-register.am/am/companies/1266829/beneficiary.pdf>

2. Աշխատանքների իրականացման ընթացքում, ելնելով տեղանքի յուրահատկություններից, անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին՝ բացառելով տարածքում հանքաքարի վերամշակման (ֆաբրիկա, պոչամբար և այլն) և կուտակման աշխատանքների իրականացումը:

3. Հատուկ պահպանվող տարածքներում բացառել որևէ աշխատանքների իրականացումը:

4. Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ նախատեսվող գործունեության համար տրամադրված տարածքը հարակից է «Արևիք» ազգային պարկի մասնաճյուղի՝ «Բողաքար» տեղամասին, ուստի աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել՝ հաշվի առնելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի և ՀՀ կառավարության «Արևիք» ազգային պարկ ստեղծելու, «Արևիք» ազգային պարկի և «Արևիք ազգային պարկ» պետական ոչ-առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» 15.10.2009թ. N 1209-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի պահանջները:

5. Գործունեության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների՝ ջուր, օդ, հող և այլն, մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, անհրաժեշտության դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը: Հետնախագծային վերլուծության ծրագիրը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

6. Շինարարական և շահագործման ընթացքում առաջացած շինադրի (կենցաղային ադր) հեռացումը, ինչպես նաև ջրօգտագործումը, մասնավորապես, Զվար-Մեղրի խողովակաշարից խմելու ջրի պահանջարկի ապահովման և այլ նպատակներով, անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. «Լիճքվազ» ՓԲԸ-ի ստանձնած պարտավորություններն ըստ 22.11.2012թ. N ՊՎ-293 ընդերքօգտագործման պայմանագրի

2.1. Սոցիալական պարտավորություններ

Օգտակար հանածոյի արդյունահանման 22.11.2012թ. N ՊՎ-293 ընդերքօգտագործման պայմանագրով, որը «Լիճքվազ» ՓԲԸ-ի հետ վերակնքվել է 24.11.2016 թվականին, չեն ամրագրվել ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում պարտավորությունները՝ խախտելով ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման պահանջները:

Իսկ նախնական՝ 22.11.2012թ. N ՊՎ-293 պայմանագրում թվային առումով կոնկրետ սոցիալական պարտավորություններ նշված չեն, բացի համայնքի սոցիալական ծրագրին մասնակցության ընդհանուր ձևակերպման:

2.1.1 Ազդակիր համայնքին ցուցաբերած փաստացի օժանդակության մասին

2016 թվականին Վարդանիձոր և Լեհվազ համայնքների օգտագործման համար նվիրաբերել է 10083333,0 արժեքային գնահատականով ԳԱԶ 33090 0-1357-02 աղբատար մեքենա:

Նույն թվականին ոչ-ֆինանսական աջակցության շրջանակներում, 505460,0 դրամ արժեքային գնահատականով գրենական պիտույքներով պայուսակներ և 2 հատ նոութբուք է նվիրաբերել «Վարդանիձորի միջնակարգ դպրոց» և «Լեհվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ներին:

Ընկերությունը 29/12/2016թ.՝ հանրային քննարկումների փուլում, Մեղրիի համայնքապետարանի հետ կնքել է սոցիալ-տնտեսական համագործակցության շրջանակային համաձայնագիր, որի շրջանակներում էլ 2017 թվականին Վարդանիձոր, Լեհվազ (Մեղրի համայնք) բնակավայրերի համար Մեղրի խոշորացված համայնքի բյուջեին է հատկացրել 27244781,0 դրամ, որպես բարեգործություն, ինչպես նաև բենզինի տեսքով օժանդակություն է ցուցաբերել «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ին:

Համաձայն այդ նույն համաձայնագրի՝ 2018թ. Մեղրի համայնքին հատկացվել է 16 133 019 դրամ գումար՝ Վարդանիձոր բնակավայրում մանկապարտեզի կառուցման նպատակով և 1500000,0 դրամ՝ Լեհվազ գյուղի հիմնական դպրոցի ջեռուցման համակարգի վերակառուցման համար:

Նույն՝ 2018թ-ին Մեղրի-Ագարակ հիմնադրամին ցուցաբերել է 2000000,0 դրամ օգնություն, «Զանգեզուր բիոսֆերային կոմպլեքս» ՊՈԱԿ-ին տվել է 355863,0 դրամ արժեքային գնահատականով վառելիք, 140 ֆիզիկական անձանց տվել է 678160,0 արժեքային գնահատականով նվերներ:

2.2. Բնապահպանական պարտավորություններ

Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է՝

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:

2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:

3. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործելու համար:

4. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պայմանները:

5. Ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

2.3 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը

- Տարածք այցելության ընթացքում ԷկոԼուրն արձանագրեց, որ Ընկերության ծանր տեխնիկան մտնում է «Արևիք» ազգային պարկի պահպանության գոտի՝

«Բողաքարի» արգելավայր՝ հաշվի չառնելով արգելավայրի մուտքն արգելող ցուցանակների առկայությունը:



Նկար 5. Բողաքարի արգելավայրի ցուցանակ



Նկար 6. Լիճքվազ թեյի ոսկու հանքավայրից հանքաքար տեղափոխող բեռնատար

- Ընկերությունը չի ապահովում բնության՝ մասնավորապես «Արևիք» ազգային պարկի պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից. այսինքն խախտվում են 29.06.2017թ. ԲՓ 60 փորձաքննական եզրակացության 4-րդ կետի և ընդերքօգտագործման պայմանագրային պահանջները:
- 2017թվականին չի վճարել պայմանագրով նախատեսված մշտադիտարկումների իրականացման գումարը:
- Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 191-Ն որոշման շրջանակներում բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով իրականացված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ «Լիճքվազ» ՓԲԸ-ն (նոր անվանումը - «ԷՅՁԻԱՐՄԻ» (Արմենիան Գոլդ Բիտրս Բորիփոբեյշն) ՍՊԸ) Լիճքվազ-թեյի հանքավայրի համար ներկայացրել է 2018-2020թ. եռամսյակային և տարեկան հաշվետվությունները²:

2.4 Հանքի փակում, ֆինանսական երաշխիքներ

Ընդերքօգտագործման պայմանագրի վերակնքման ժամանակ Ընկերությունը չի ներառել հանքի փակման ծրագիրը, մինչդեռ այն պետք է ներկայացվեր օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելուն զուգահեռ /Խախտվել են Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքի հոդված 49-ի մաս 2-ի կետ 6-ի պահանջները/:

²<http://www.mnp.am/am/pages/233>

3. «Լիճքվագ» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշներն՝ ըստ ԱՃԹՆ հաշվետվությունների³

տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
Ոսկի, արծաթ և պղինձ պարունակող հանքաքար	0	0	Արդյունահանվել և Կապանի լեռնահարստացման կոմբինատ ՓԲԸ-ում իրացվել է ոսկի, արծաթ և պղինձ պարունակող 40031տ հանքաքար՝ 881108705 դրամ իրացման արժեքով (Որպես վերջնական պարունակություն ներկայացված է պայմանական ոսկու վերածված ցուցանիշը) Մատակարարված արտադրատեսակում (խտանյութ, համաձուլվածք) վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով)՝ ծավալը՝ 46100 գրամ:
Շահութահարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց.	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0
Եկամտային հարկ, դրամ	Հշվրկ. 22622325 Վճր. 22622325 Հշվնց. 0	Հշվրկ. 33282268 Վճր. 28979732 Հշվնց. 0	Հշվրկ. 83588590 Վճր. 0 Հշվնց. 0
Ավելացված արժեքի հարկ, դրամ	Հշվրկ. 1617516 Վճր. 1617516 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 9364491 Վճր. 9364491 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 138646929 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0
Ակցիզային հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0

³ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/>

Ռոյալթի, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0
Բնօգտագործման վճար, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Բնապահպանակա ն վճարներ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0	Հշվրկ. 1029132 Վճր. 0 Հշվրկ. 0
Բնապահպանակա ն վճարներ (մաքսային), դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0
ՇԹ պետտուրք, դրամ	Վճարված՝ 10000000	Վճարված՝ 10000000	Վճարված՝ 10000000
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	Բազային՝ 32500000, Հաշվարկված 1453947 Վճարված՝ 0	Բազային՝ 32500000, Հաշվարկված 1453947 Վճարված՝ 0	Բազային՝ 32500000, Հաշվարկված 1453947 2018 թվականին վճարվել է կանխավճարի գումարը և 2016, 2017 թվականների համար - ընդամենը 7782894 դրամ, ինչպես նաև վճարվել է 2018 տարվա համար՝ 1453947 դրամ, ընդամենը՝ 9236841 դրամ
Մշտադիտարկումն երի իրականացման վճար, դրամ	Բազային՝ 18500000 Հաշվարկված՝ 827600 վճարված՝ 3602600 /Գումարը ներառում է նախնական վճար (15 տոկոս) 2775000 և 2016 թվականի համար կատարված վճարը 827600/	Բազային՝ 18500000 Հաշվարկված՝ 827600 վճարված՝ 0	Բազային՝ 18500000 Հաշվարկված՝ 827600 Վճարված՝ 827600
Գույքահարկ, դրամ	Հշվրկ. 70100 Վճր. 108700-	Հշվրկ. 60960 Վճր. 60960- /Երևան	Հշվրկ. 16320 Վճր. 16320

	/Երևան քաղաքում/	քաղաքում/	/Երևան քաղաքում/
Հողի հարկ, դրամ	Հշվրկ. Վճր.	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Վարձակալություն (Հողամաս), դրամ /Մեղրու համայնք/	Վարված՝ 4054372	Վճարված՝ 5190965	Վճարված՝ 5186930
Վարձակալություն (Անշարժ գույք)	0	0	0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	0	0	0
Սոց.-տնտ. պարտավորություն	0	0	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն/ ԿՄՊ (համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիր) (Վճարվել է Մեղրի համայնքի արտաբյուջետային հաշվին՝ 16133019)
Բարեգործական հատկացումներ	Աղբատար մեքենա ԳԱԶ 33090 0-1357-02 (Արժեքային գնահատականը՝ 10083333) Վարդանիձոր, Լեհվազ համայնքներին	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն/ ԿՄՊ (համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիր) (Վճարվել է Մեղրի համայնքի բյուջե՝ 27244781)	
Ֆինանսական և ոչ ֆինանսական օգն.	«Վարդանիձորի միջնակարգ դպրոց» և «Լեհվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին արված նվիրատվություն՝ Պայուսակներ գրենական	«Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ (Արժեքային գնահատականը՝ 900000) «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ին	Մեղրի-Ագարակ հիմնադրամ՝ 2000000 դրամ Զանգեզուր բիոսֆերային կոմպլեքս ՊՈԱԿ-ին տրվել է վառելիք (Արժեքային գնահատականը՝ 355863)

	պիտույքներով, 2 նոութբուք (Արժեքային գնահատականը՝ 505460) «Հայոց արժիվներ» հայրենասիրական ՀԿ-ին արվել է նվիրատվություն (Արժեքային գնահատականը՝ 700000)	տրվել է բենզին ԱԻ-92-Կ5 (Արժեքային գնահատականը՝ 304167)	140 ֆիզիկական անձանց տրվել են նվերներ (Արժեքային գնահատականը՝ 678160)
Աշխատատեղեր	8 մարդ, որից՝ 6 ՀՀ քաղաքացի, 2-ը օտարերկրյա	24 մարդ, որից՝ 23-ը ՀՀ քաղաքացի, 1-ը օտարերկրյա	Ընդհանուր՝ 43 մարդ, որից՝ 26-ը Կապանից, 1-ը Վարդենիսից, 6-ը Երևանից, 10-ը Ռուսաստանի Դաշնությունից
Անհատույց օտարումներ	0	0	0

4. «Լիճքվազ» ՓԲԸ-ի և պետական մարմինների ներկայացրած տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծություն 2016, 2017, 2018թթ համար

2016, 2017, 2018 թվականների համար Ընկերության, Շրջակա միջավայրի (ՇՄ) և Տարածքային կառավարման ենթակառուցվածքների (ՏԿԵ) նախարարությունների, Պետական եկամուտների կոմիտեի՝ հաշվետվությունների մեջ կան էական տարբերություններ, մասնավորապես՝

- Ընկերության 2018 թվականի հաշվետվության մեջ չի նշված 2018 թվականին Մեղրի համայնքի արտաբյուջետային հաշվին Լեհվազ գյուղի հիմնական դպրոցի ջեռուցման համակարգի վերակառուցման համար փոխանցված 1500000,0 դրամի մասին, մինչդեռ այն արտացոլված է ՏԿԵ նախարարության հաշվետվության մեջ⁴:

- Տարբերություններ կան նաև 2017 թվականին հողամասի վարձակալության դիմաց կատարված վճարումների մասով: Ընկերության հաշվետվության մեջ նշված է, որ այդ տարում Մեղրի համայնքին տրվել է 5190965,0 դրամ վարձակալության վճար, ՏԿԵ նախարարության հաշվետվության մեջ՝ 5206482,0 դրամ⁵:

- Տարբերություններ կան նաև Ընկերության և Շրջակա միջավայրի նախարարության 2018թ. հաշվետվություններում՝ մշտադիտարկումների իրականացման համար վճարվող

⁴ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=2> :
⁵ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=2> :
<https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=2> :

վճարների մասով: Ըստ Ընկերության հաշվետվության՝ վճարվել է 827600,0 դրամ⁶, ըստ նախարարության՝ 1655264,0 դրամ⁷:

- Տարբերություններ կան Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) և Ընկերության հաշվետվությունների մեջ: 2016թվականի Ընկերության հաշվետվության մեջ նշվում է, որ չի վճարել շահութահարկ և եկամտահարկ, մինչդեռ ՊԵԿ-ի նույն տարվա հաշվետվության մեջ նշվում է, որ վճարել է 3330619,0 դրամ շահութահարկ, իսկ եկամտահարկերի չափերը չեն համընկնում, ըստ ՊԵԿ-ի, 22661769,0 դրամ է, ըստ Ընկերության՝ 22622325,0 դրամ⁸: ՊԵԿ-ի 2018 թվականի հաշվետվության մեջ նշվում է, որ 2018 թվականին միասնական հաշվից և գանձապետական այլ հաշիվներից Ընկերության կողմից մարվել է (վճարված), ինչպես նաև մաքսային մարմնում վճարված (ներառյալ տույժերը և տուգանքները) 430016,0 դրամ բնապահպանական և բնօգտագործման միասնական հարկը, մինչդեռ Ընկերության 2018 թվականի հաշվետվության մեջ այդ տվյալները բացակայում են:

Հաշվետվությունը չծանրաբեռնելու համար այլ տարբերությունները չենք ներկայացնում, ըստ ամենայնի, բերված օրինակները բավարար են, որպեսզի խնդիրը մատնանշվի և բարձրացվի դրա շտկմանն ուղղված հարցը:

5. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ

Հայաստանի ԱՀԹՆ պաշտոնական կայքում հրապարակված «Լիճքվագ» ՓԲԸ-ի հաշվետվության համաձայն Ընկերությունը 2016-2018 բնապահպանական հարկ չի հաշվարկել և չի վճարել պետական բյուջե: 2017թվականի պետական եկամուտների կոմիտեի հաշվետվության համաձայն Ընկերությունը վճարել է 14103,0 դրամ բնապահպանական հարկ:

Մինչ 2020 թ-ը «Լիճքվագ» ՓԲԸ-ն ներառված չի եղել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում նշված կազմակերպությունների ցանկում, ինչի հետևանքով Ընկերության բնապահպանական վճարներից Մեղրի համայնքը բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար տեսականորեն չի կարողացել օգտվել: 2020թ-ի մայիսի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը⁹, ըստ որի՝ բոլոր մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունները՝ այդ թվում նաև «Լիճքվագ» ՓԲԸ-ն, ընդգրկվեցին այդ ցանկում:

6. Համայնքային զարգացման ծրագրերում «Լիճքվագ» ՓԲԸ-ի ներգրավվածությունը

Մեղրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրում¹⁰ ներառված մի շարք ուղղություններից նշվում է համայնքին տնտեսական բարեկեցություն բերող, բնապահպանական նվազ ազդեցությամբ և արդյունավետ կառավարվող հանքարդյունաբերություն (պղինձ, մոլիբդեն, ոսկի, գրանոդիորիտ) ունենալու տեսլականը: Չնայած դրան, ծրագրում լուրջ մտահոգություններ կան տարածաշրջանում հանքարդյունաբերության ոլորտի կողմից համայնքի տարածքների աղտոտվածության նկատմամբ: Նշվում է, որ չնայած տնտեսական

6 <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf>

7 <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf>

⁸ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=3>

9 <https://www.arlis.am/>

10 <http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/>

շահութաբերությանը, հանքարդյունաբերության զարգացումը կարող է հանգեցնել էկոլոգիական լուրջ խնդիրների՝ հողային ծածկույթի խախտման, պոչամբարների ընդլայնման, թափոնների կուտակումների և ջրային ռեսուրսների աղտոտման: Հատկանշանական է, սակայն, որ համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկություններից աշխատատեղերի ստեղծման և մասնավոր ներդրումների հետ կապված ծրագրերից հիշատակված են միայն «Լիճքվազ» ՓԲԸ-ն և «Ղարագույլյաններ» ՓԲԸ-ն:

Մասնավորապես՝ ծրագիրը նախատեսում է համայնքում 37.000.000 ՀՀ դրամի ներդրում «Լիճքվազ» ՓԲԸ-ի կողմից հանքավայրի շահագործման նպատակով: Նույն Ծրագրին համապատասխան ակնկալվում է, որ Ընկերության՝ հանքավայրի շահագործման արդյունքում կստեղծվի 176 նոր աշխատատեղ: Նույն զարգացման ծրագրով «Վարդանիձոր գյուղում Մեղրի մանկապարտեզի մասնաշենքերի հիմնում» միջոցառմամբ նախատեսվում է, որ Վարդանիձոր գյուղում կապահովվի նախադպրոցական կրթության մատչելիությունն և հասանելիությունը: Այդ միջոցառմամբ ակնկալվում է բնակչության սոցիալական խնդիրների մի մասի լուծում, այդ թվում բնակավայրում շինարարության ընթացքում ժամանակավոր, իսկ ավարտից հետո՝ մշտական աշխատատեղերի ստեղծում:

Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով համայնքի զարգացման հնգամյա Ծրագրով տարեկան նախատեսված է 200000-215000 դրամ գումարով միջոցառումների իրականացում:

7. Ընկերության՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման համար գումարների ներդրման, մշտադիտարկումների, բնապահպանական և բնօգտագործման հարկերի, պարտադիր այլ վճարների մարման մասին

2016 թվական

1. Դրամագլխի բազային 5285700,0 դրամ գումարից տվյալ տարվա հաշվարկված գումարի մեծությունը կազմել է 1453947,0 դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում հատկացումներ չեն իրականացվել:
2. Մշտադիտարկումների իրականացման վճարը կազմել է 827600,0 դրամ, որից 3602600,0 դրամը՝ ներառյալ նաև նախնական վճարը, չի վճարել:
3. Չի հաշվարկել և չի վճարել բնապահպանական և բնօգտագործման վճարները այն դեպքում, երբ Ընկերությունը 2016թ. ստացել է Մեղրի գետից տարեկան 50,04 հազար խմ ծավալով ջրօգտագործման թույլտվություն և օրենքով սահմանված կարգով պետք է ՀՀ պետական բյուջե վճարեր համապատասխան ջրօգտագործման հարկ:
4. Հողի հարկ, անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների վարձակալության դիմաց վճարումներ չի կատարել:
5. Ազդակիր Մեղրի համայնքային բյուջե է մուծել 4054372,0 դրամ հողամասի վարձակալության վճար, իսկ հողի հարկ, անշարժ և շարժական գույքի հարկեր չի մուծել: Երևան քաղաքում վճարել է 108700,0 դրամ գույքահարկ:
6. Ազնիվ, գունավոր, և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 միլիոն դրամ պետական տուրքը վճարել է:

7. Մեղրի խոշորացված համայնքին Վարդանիձոր և Լեհվազ գյուղերի համար, որպես բարեգործություն նվիրել է 10083333,0 դրամ արժողությամբ աղբատար մեքենա: «Վարդանիձորի միջնակարգ դպրոց» և «Լեհվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին նվիրել է պայուսակներ գրենական պիտույքներով, 2 նոութբուք:

2017 թվական

1. Դրամագլխի բազային 32500000,0 դրամ գումարից տվյալ տարվա հաշվարկված չափը կազմել է 1453947,0 դրամ, ինչը չի վճարել:
2. Մշտադիտարկումների իրականացման վճարը կազմել է 827600,0 դրամ, որից վճարում չի կատարել:
3. Ազդակիր Մեղրի համայնքային բյուջե է մուծել 5190965,0 դրամ հողամասի վարձակալության վճար, իսկ հողի հարկ, անշարժ և շարժական գույքի համար հարկեր չի մուծել: Երևան քաղաքում մուծել է 60960,0 դրամ գույքահարկ:
4. Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 միլիոն դրամ պետական տուրքը վճարել է:
5. Չի հաշվարկել և չի վճարել բնապահպանական և բնօգտագործման վճարները:
6. Որպես բարեգործություն՝ Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն /ԿՍՊ/ (համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիր), Մեղրի համայնքի բյուջե է վճարել՝ 27244781,0 դրամ:
7. Ֆինանսական և ոչ ֆինանսական օժանդակություն է ցուցաբերել՝ «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ին (Արժեքային գնահատականը՝ 900000) և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ին տվել է բենզին ԱԻ-92-Կ5 (Արժեքային գնահատականը՝ 304167,0):

2018 թվական

1. Դրամագլխի բազային 32500000,0 դրամ գումարից 2018 թվականին վճարվել է ինչպես կանխավճարը, այնպես էլ 2016 ու 2017 թվականների համար պահանջվող գումարը՝ ընդամենը 7782894,0 դրամ:
2. Մշտադիտարկումների իրականացման բազային 5285700,0 դրամից տվյալ տարվա 827600,0 դրամը հաշվարկվել և վճարվել է:
3. Հաշվարկել, սակայն չի վճարել 1029132,0 դրամ բնապահպանական հարկը: Բնօգտագործման վճարներ նույնպես չի վճարել այն դեպքում, երբ ընկերությունը 2016թ. ստացել է Մեղրի գետից տարեկան 50,04 հազար խմ ծավալով ջրօգտագործման թույլտվություն և օրենքով սահմանված կարգով պետք է ՀՀ պետական բյուջե վճարեր համապատասխան ջրօգտագործման հարկ:
4. Հողի հարկ, անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների վարձակալության դիմաց վճարումներ չի կատարել:
5. Ազդակիր Մեղրի համայնքային բյուջե է մուծել 5186930,0 դրամ հողամասի վարձակալության վճար, իսկ հողի հարկ, անշարժ և շարժական գույքի համար հարկեր չի մուծել: Երևան քաղաքում մուծել է 16320,0 դրամ գույքահարկ:
6. Ռոյալթի չի վճարել:
7. Ազնիվ, գունավոր, և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 միլիոն դրամ պետական տուրքը վճարել է:
8. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն/ ԿՍՊ (համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիր) Մեղրի համայնքի արտաբյուջետային հաշվին է վճարել 16133019,0 դրամ:

9. 2000000,0 դրամի չափով ֆինանսական օժանդակություն է ցուցաբերել «Մեղրի-Ագարակ հիմնադրամին»: «Զանգեզուր բիոսֆերային կոմպլեքս» ՊՈԱԿ-ին հատկացրել է 355863,0 դրամ արժեքային գնահատականով վառելիք, ինչպես նաև 140 ֆիզիկական անձանց հատկացրել է 678160,0 արժեքային գնահատականով նվերներ:

8. Այցելությունների արդյունքում հարցումների վերլուծություն

ԷկոԼուրի կողմից 2021 թվականի հունվարի 7-11-ը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում ընդերքօգտագործման իրավունքի տիրապետման, սակայն փաստացի գործունեություն չիրականացնող/մասնակի իրականացնող 5 ընդերքօգտագործող կազմակերպությունների ազդակիր բնակավայրեր այցելության ընթացքում ընդհանուր առմամբ հանդիպել և հարցազրույցներ է անցկացրել տարածաշրջանի 25 բնակչի (8 կին և 17 տղամարդ), այդ թվում նաև բնակավայրերի վարչական ներկայացուցիչների և Մեղրի խոշորացված համայնքի ներկայացուցիչի հետ: Այցի ընթացքում ստացած տեղեկատվությունը հիմնականում ներառվել են Ծրագրի շրջանակներում կազմված՝ առանձին կազմակերպությունների վերաբերյալ հաշվետվություններում:



Նկարներ 7., 8., 9. Հարցազրույցներ Վարդանիձորում, Մեղրիում, Լեհվազում

Ծրագրի շրջանակներում «Լիճքվազ» ՓԲԸ-ին պատկանող Լիճվազ-թեյի ոսկու հանքավայրի շահագործման ազդակիր Լեհվազ և Վարդանիձոր բնակավայրերի, ինչպես նաև Մեղրի խոշորացված համայնքի բնակչության շրջանում սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի վերաբերյալ անցկացված հարցման նպատակն էր պարզել ԱՃԹՆ-ի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը հանքավայրի հետագա շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ: Այդ տեղեկատվության հիմնական մասը տեղ են գտել սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև:

- Որպես համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում առկա խնդիրներ՝ հարցման

մասնակից գյուղական բնակավայրերի բնակիչները նշում են աշխատատեղերի բացակայությունը, միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության բացակայությունը, ստացված գյուղատնտեսական ապրանքների իրացման հետ կապված դժվարությունները:

- Հարցվածների գերակշիռ մասը կողմ է Լիճվազ-թեյի ոսկու հանքավայրի շահագործմանը, քանի որ աղքատությանից և սոցիալական ծանր վիճակից դուրս գալու միակ ճանապարհը համարում է դա, սակայն սակայն դժգոհ են, որ Ընկերությունը ազդակիր համայնքի բնակիչներին չի վերցնում աշխատանքի: Կարծում են, որ հանքավայրը շահագործող «Լիճվազ» ՓԲԸ-ն պարտադիր պետք է ապահովի սահմանված էկոլոգիական նորմերի և պահանջների կատարումը:
- Շրջակա միջավայրի աղտոտման և իրենց առողջության վրա ունեցած ազդեցություն կապը չեն կարողանում միանշանակ գնահատել, քանի որ չեն տիրապետում ստույգ վիճակագրական և հետազոտական տվյալների: Բոլոր դեպքերում հարցվածներին անհանգստացնում է շրջակա միջավայրի աղտոտվածությունը: Այդ մասին նշվում է նաև ազդակիր Մեղրի համայնքի զարգացման հնգամյա ծրագրում:
- Մեղրի համայնքի կազմի մեջ մտնող գյուղական՝ Լեհվազ և Վարդանիձոր բնակավայրերի վարչական ղեկավարն ու բնակիչները իրազեկված չեն Ընկերության կողմից հողի և այլ անշարժ գույքի դիմաց վճարումների գործընթացից:
- Լեհվազ և Վարդանիձոր բնակավայրերի վարչական ղեկավարն ու բնակիչները տեղյակ չեն, թե բնակավայրերում իրականացվող ծրագրերից որոնք են Ընկերության տրամադրած գումարներով արվում:
- Հարցման մասնակիցները կարծում են, որ հանքերի տարածքից աղտոտվածության հետևանքով ծառերը և մշակովի բույսերը չորանում են, ընկել է հողերի բերրիությունը, հաճախ դժվարություններ են ստեղծվում իրենց մշակած գյուղատնտեսական մթերքի իրացման ժամանակ:
- Ըստ համայնքապետարանի ներկայացուցչի և բնակավայրերի վարչական ղեկավարի, իրենք չեն մասնակցել «Լիճվազ» ՓԲԸ-ի ընդերքօգտագործման պայմանագրի կնքման գործընթացներին:
- Առողջական խնդիրներ ունենալու ժամանակ բնակիչներն օգտվում են Մեղրիի բուժսպասարկման ծառայություններից: Ավելի լուրջ առողջական խնդիրների դեպքում օգտվում են մարզային և Երևանի առողջապահական կենտրոնների ծառայություններից:
- ԷկոԼուրի հետ հանդիպման ժամանակ Մեղրի խոշորացված համայնքապետարանի Մեղրի համայնքի կազմակերպական բաժնի պետը /Վանիկ Սարգսյան/ նշեց, որ, հայ-ադրբեջանական պատերազմի բացասական հետևանքների փորձից ելնելով, առաջնային է Մեղրի-Երևան ճանապարհի անվտանգության ապահովումը, ինչպես նաև Տաթև-Երևան ճանապարհի բարեկարգումն այնպես, որ ապահովվի բեռնատար ծանրաքարշ մեքենաների երթևեկությունը: Նա նշեց նաև, որ զինադադարի պայմաններում համայնքում առաջացել են հրատապ լուծման ենթակա նոր՝ քաղաքացիական պաշտպանության թաքստոցների և ապաստարանների կառուցման, միջպետական ավտոճանապարհների որակի և անվտանգության ապահովման,

Արցախից տեղահանվածների, գոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրներ:

- Ըստ հարցվածների՝ հայ-ադրբեջանական սահմանագատման գոտում հանքավայրեր և նրանց ենթակառուցվածքներ չկան:
- Ըստ Մեդրի համայնքի Լեհվազ-Վարդանիձոր /Այգեձոր, Թխկուտ/ բնակավայրերի վարչական ներկայացուցչի /Ռաֆիկ Մկրտչյան/ նոր պայմաններում հանքավայրերի շահագործումն իրատեսական է, եթե ներդնողը գնա ռիսկի: Ցանկալի է, որ աշխատեն, որպեսզի տնտեսությունը զարգանա: Եթե հանքավայրը նորմալ աշխատեր, երևի թե բնակիչները կաշխատեին, եկամուտ կունենային, կմնային գյուղում:
- Հարցումներից պարզ դարձավ, որ ընդհանրապես բացակայում է բնակավայրերի տարածքում գործունեություն իրականացնող հանքարդյունահանողների, այդ թվում նաև «Լիճքվազ» ՓԲԸ-ի համագործակցությունը ազդակիր բնակավայրերի հետ:

10. Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման ոլորտում ազդակիր համայնքների բնակիչներն առաջարկում են՝

1. Պարբերաբար կատարել տարածքի ռադիոակտիվ մակարդակի չափագրումներ
2. Ապահովել գյուղմթերքի պարբերական կենսաքիմիական ստուգումները:
3. Կիրառել հանքաքարի փոշով արոտավայրերի աղտոտման կանխարգելման միջոցառումներ:
4. Իրականացնել հանքավայրերից բնակչության խմելու ջրի աղբյուրների աղտոտման կանխարգելման միջոցառումներ:
5. Գյուղական բնակավայրերում հիմնել օրինական աղբավայրեր, բնակավայրերում տեղադրել աղբամաններ, կազմակերպել պարբերական աղբահանություն:
6. Ուժեղացնել ազդակիր բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող հանքարդյունահանող ընկերությունների իրատեսական հաշվետվողականության և համագործակցության մեխանիզմները:
7. Հանքավայրը շահագործել բացառապես շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ապահովման համար սահմանված նորմատիվների և չափաքանակներին համապատասխան:
8. Քանի որ գործնականում հանրային լսումներին ներկայացված բնապահպանական միջոցառումներից որևէ մեկը փաստացի չի կատարվում, հանքարդյունահանման ծրագրերի հաստատման գործընթացում ներկայացնել շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելմանն ուղղված գործուն և կատարման համար իրատեսական բնապահպանական ծրագրեր:

Բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար բնակիչներն առաջարկում են՝

1. Ընդերքօգտագործման պայմանագրերի կնքման ժամանակ պայմանագրի մաս հանդիսացող՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պարտավորությունների ձևավորման գործընթացին անպայման մասնակից դարձնել համայնքապետարանների ղեկավարներին և ազդակիր բնակավայրերի

վարչական ներկայացուցիչներին, այդ բաղադրիչում ներառել նրանց պահանջներն ու կարիքները:

2. Հանքարդյունաբերական ընկերություններում առաջնահերթությունը տալ ազդակիր համայնքի և բնակավայրերի բնակիչներին աշխատանքի ընդունելուն:
3. Ընկերությունների կողմից համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցության համար նախատեսված գումարներն ուղղել միջբնակավայրային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացմանը:
4. Ապահովել միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցություն:
5. Որպես բնակավայրերի զարգացման հեռանկարներ դիտարկել զբոսաշրջությունը, պահածոների և չոր մրգերի փոքր արտադրամասերի կազմակերպումը, փոքր գյուղատնտեսության զարգացումը:
6. Բնակավայրերում սկսել քաղաքացիական պաշտպանության կառույցների՝ թաքստոցների, ապաստարանների, նկուղների կառուցման/վերակառուցման աշխատանքները, վարչական շենքեր, դպրոցները համալրել նոր և պիտանի անհատական պաշտպանիչ պարագաներով, ապահովել միջպետական ավտոճանապարհների որակը և անվտանգությունը, գոհվածների ընտանիքներին ցուցաբերել սոցիալական աջակցություն:

11. Եզրակացություն

1. 22.11.2012թ. N ՊՎ-293 ընդերքօգտագործման պայմանագիրը կնքվել է/վերակնքվել է/ Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի հոդված 54-ի 3-րդ մասի 9-րդ կետի և հոդված 49, մաս 2, կետ 6-ի պահանջների խախտմամբ: Պայմանագրում բացակայում են ազդակիր համայնքի և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները և հանքի փակման ծրագիրը, մինչդեռ այն պետք է ներկայացվեր օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելուն զուգահեռ:
2. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր, մինչև 2018 թվականը, Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ չի իրականացրել /չի ապահովվել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մաս/:
3. Չի ապահովվել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը՝ մասնավորապես արդյունահանման տարեկան սահմանված ծավալները:
4. Չի ապահովվել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարումը, հատկապես բնապահպանական պատասխանատվության մասով («Բողաքարի» արգելավայր տեխնիկայի մուտք, լցակույտերից փոշու արտանետումներ):
5. Ազդակիր բնակավայրերի բնակիչները, իրազեկված չեն սոցիալական ծախսերի մասով ընկերությունների ստանձնած պարտավորությունների մասին, սակայն Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության /ԿՍՊ/ (համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիր) շրջանակներում Ընկերությունը կատարել է շոշոփելի ներդրումներ:
6. «Լիճքվազ» ՓԲ ընկերությունը տարիներ շարունակ կատարվող լեռնակապիտալ աշխատանքներում օգտագործվող փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը չի վճարել: Ընկերությունը խախտել է

«Գույքահարկի մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի պահանջները: Չնայած օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2) կետը սահմանում է, որ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարող կազմակերպությունն այս հարկատեսակը պետք է վճարի իր հաշվառման վայրի համայնքի բյուջե, այնուամենայնիվ, «ԼիճքՎազ» ՓԲԸ-ն համայնքային բյուջե է վճարել միայն շենք-շինությունների համար սահմանված գույքահարկը, այն էլ Երևան քաղաքում՝ չվճարելով փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը: Այստեղ առկա է օրենսդրական բաց, որը պետք է լրացնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեռնակապիտալ աշխատանքներում ներգրավված փոխադրամիջոցների գործունեության արդյունքում դրանց թողած բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրում են ազդակիր բնակավայրերը/համայնքի բնակիչները:

7. Ընկերությունը մինչև 2019 թվականին կատարել է որոշակի լեռնակապիտալ աշխատանքներ և տեղափոխել մակաբացման ապարները, 2018 թվականին կատարել ոսկի, արծաթ և պղինձ պարունակող 40031տ. հանքաքարի արդյունահանում, այնուամենայնիվ, մինչև 2018 թվականը չի վճարել բնապահպանական վճարներ, որոնք, համաձայն ՀՀ օրենսդրության, պետք է բաշխվեին ազդակիր համայնքների միջև՝ նրանց կողմից ներկայացվող բնապահպանական և սոցիալական և առողջապահական ծրագրերի իրականացման նպատակով:
8. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված՝ 176 աշխատատեղերի բացման հեռանկարը: Ներկայումս ընկերության աշխատանքներում ներգրավված 43 աշխատակիցներից 26-ն են Սյունիքի մարզից:
9. Չնայած նրան, որ Ընկերությունը 2016թվականին ստացել է Մեղրի գետից տարեկան 50,04 հազար խմ ծավալով ջրօգտագործման թույլտվություն, ոչ մի տարի չի հաշվարկել և վճարել բնօգտագործման հարկը: Արդյունահանած և իրացված խտանյութի համար չի վճարել ռոյալթի:
10. 2016թվականին Մեղրի խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր Լեհվազ և Վարդանիձոր բնակավայրերը զրկվել են ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:
11. Ազդակիր համայնքի և բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն ԱՃԹՆ գործընթացների մասին:
12. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:
13. Հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման՝ ընդերքօգտագործման պայմանագրային դրույթը հակասում է բնապահպանական օրենսդրությամբ սահմանափակվող ՇՄԱԳ եզրակացության 2-րդ պահանջին, համաձայն որի՝ տվյալ տարածքում բացառվում է հանքաքարի վերամշակման (ֆաբրիկա, պոչամբար և այլն) և կուտակման աշխատանքների իրականացումը: Անհրաժեշտ է կանոնակարգել այս խնդիրը: Ընկերության կողմից արդյունահանվող մոտ 40,0 հազար տոննա (հետագայում մինչև նախագծային 300,0 հզ) հանքաքարի՝ Կապանի լեռնահարստացման ֆաբրիկայում մշակումն անխուսափելիորեն կգերազանցի Գեղանուշի պոչամբարի հզորությունները ինչպես ծավալային, այնպես էլ վթարայնության առումով:

Սույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: